«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյան
HETQ.am-ի լրագրող Ամալյա Մարգարյանից

(Էլ-փոստ՝ amalia.margarian@gmail.com, հեռ. 094550562)

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տեղեկություններ տրամադրել հետևյալ հարցերի մասին.

1. Խնդրում եմ նշել, թե Վարդենիսի տարածաշրջանի Գեղամասար համայնքի բնակայրերում (18 բնակավայր) քանի՞ նախադպրոցական հաստատություն է գործում՝ (նկատի չունեմ համավարակի պայմանները) նշել առանձնացված՝ ըստ բնակավայրի.

2. Գեղամասար համայնքի որ բնակավայրերում քանի՞ դպրոց կա, տվյալները տրամադրել ըստ՝ հիմնական եւ ավագ դպրոցների ցանկի։

3. Խնդրում եմ նշել՝ Գեղամասար համայնքի բնակավայրերում դպրոցահասակ քանի՞ երեխա է հաճախում դպրոց, տվյալները տրամադրել ըստ բնակավայրերի։

4. Խնդրում եմ նշել՝ Գեղամասար համայնքի բնակավայրերում նախակրթարան հաճախող քանի՞ երեխա կա, տվյալները տրամադրել ըստ բնակավայրերի։

5. Խնդրում եմ նշել, այս տարի Գեղամասար համայնքի բնակավայրերից առաջին դասարան ընդունվողների թիվը՝տվյալները տրամադրել ըստ բնակավայրերի։

6. Գեղամասար համայնքի բնակայրերում քանի՞ շրջանավարտ է 2019-2020թթ. տարի ավարտել դպրոցը՝ տվյալները տրամադրել ըստ բնակավայրերի։

7. Խնդրում եմ տրամադրել Գեղամասար համայնքի բնակավայրերի դպրոցներում ուսուցիչների թափուր հաստիքների ցանկը՝ առանձնացված ըստ բնակավայրերի եւ առարկաների։

Ամալյա Մարգարյան

10 հուլիս 2020թ.